ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ԱՎՍՏՐԻԱ
ԳՐԱՑԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



2014թ. հուլիսի 13-ին Հյուսիսային համալսարանի 3 աշխատակիցներ հայաստանյան ութ բուհերի աշխատակիցների հետ Տեմպուսի ԳՈՎԵՐՆ ծրագրով մեկնեցին Ավստրիա և չորս օր անցկացրեցին Գրաց քաղաքում: Գործուղման ընթացքում մասնակիցները կարևոր տեղեկատվություն ստացան Ավստրիայի և ընդհանրապես Եվրոպայի կրթական տարածքի վերաբերյալ:

Լյուվենի համալսարանի ներկայացուցիչ Մայքլ Ջորիսը ներկայացրեց կրթության ոլորտի փոփոխությունների փիլիսոփայությունը և ծանոթացրեց եվրոպական տարածքի կրթությանը վերաբերվող ամենամոդայիկ տեսություններին՝ «սև կարապի», «Ս տառի տեսության», էկոհամակարգերի տեսության հետ: Սեմինարի ընթացքում մասնակիցներին տրվեց հետևյալ տնային հանձնարարությունը՝

1. Ռազմավարության մշակում,
2. մագիստրական կրթության չափանիշների մշակում,
3. դասավանդման համապատասխանություն վերջնարդյունքներին,
4. մոդուլների դիսկրիպտորների մշակում:

Ավստրիայում պետությունը բուհերին շենքերը անվճար է տրամադրում: Կոմունալ ծախսերի մեծ մասը հոգում է քաղաքապետարանը: Այդ ամենը ապացուցում է, թե որքան է կարևորվում բուհը պետության կողմից: Միաժամանակ մեծացվում է բուհերի ինքնավարությունը:

Նախկինում համալսարանները վերահսկվում էին նախարարության կողմից, նոր օրենքով՝ համալսարանի խորհրդի կողմից: Նշվեց անգլերեն ծրագրերի մշակման կարևորությունը: Շատ գրավիչ են համատեղ գիտական աստիճանները: Դոկտորանտական ծրագրերը մշակվում են տասը տարվա համար: Բոլոր մշակումներում հաշվի են առնվում Բոլոնիայի փաստաթղթերը: Տասը տարի առաջ անգլերենով ծրագրերը բացակայում էին, այժմ պարտադիր են:

Այժմ ունեն 12 մագիստրական ծրագրեր անգլերեն լեզվով, 39 մասնագիտական ծրագրեր ունեն: Հաջող իրականացման համար կարևոր է բուհի արդյունավետ կառուցվածքը, նաև այն, թե ռեկտորը, պրոռեկտորները որքանով են մասնակցում գործընթացներին: Ռեկտորատը հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին և սենատին: Կա հետազոտության, ոչ թե հետազոտողի ազատություն:

Արտաքին կապերի բաժին